2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Վարդուհի Նիկողոսի Բաբոյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17Ա

« 09 » Հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 06.12.2018թ.-ի թիվ 1419-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ՊՆ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին բնակարանային ապահովության հաշվառման վերցնելու մասին Վաղարշապատի համայնքապետարանի հանձնաժողովի 08.01.2024թ. թիվ 2 եզրակացությունը, հաշվի առնելով մարտական գործողությունների ժամանակ զոհված Արթուր Ավետիքի Վարդանյանի կնոջ՝ Արուսյակ Ռաֆիկի Արմենակյանի բնակարանային ապահովության հաշվառման վերցնելու դիմում-խնդրանքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Մաշտոց փողոց 63 շենք, 19 բնակարան հասցեում բնակվող /հաշվառված՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Մաշտոց փողոց 63 շենք, 19 բնակարան հասցեում/՝ Ավետիք Աղաբեկի Վարդանյանին, Ջեմմա Գուրգենի Վարդանյանին, Արուսյակ Ռաֆիկի Արմենակյանին, որդուն՝ Ավետիք Արթուրի Վարդանյանին /ծնված՝ 06.09.2008թ./ և դստերը՝ Անի Արթուրի Վարդանյանին /ծնված՝ 25.12.2010թ./ վերցնել բնակարանային հաշվառման՝ բնակարանային ապահովության համար:
2. Հաստատել Վաղարշապատ համայնքի բնակարանային ապահովության կարիք ունեցող զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի ցուցակը, համաձայն հավելվածի:
3. Ցուցակում ընդգրկված ընտանիքի բնակարանային ապահովության նպատակով՝ անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզպետին՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 184Կ

09 հունվար 2024թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքային համայնքի և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Նալբանդյան փողոցի թիվ 30 տան բնակիչ Արման Լևոնի Աթանյանի միջև 29.08.2006թ. /սեղանամատյան 1656/ կնքվել է Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16 շենքի դիմացի ազատ տարածքում գտնվող 0.002հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր:

Այժմ Արման Լևոնի Աթանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իր կողմից վարձակալած հողամասը իրեն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Նալբանդյան փողոցի թիվ 30 տան բնակիչ Արման Լևոնի Աթանյանին ուղղակի վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքով, որը տվյալ պահին կազմում է 136 686 / հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր ութսունվեց / ՀՀ դրամ, օտարել իր կողմից 14.02.2005թ. /սեղանամատյան 1656/ վարձակալած Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16/4 հասցեում գտնվող /վարձակալության պայմանագրով Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16 շենքի դիմացի ազատ տարածքում գտնվող / 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Արման Լևոնի Աթանյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 194

09 հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքային համայնքի և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ս.Շահումյան փողոցի թիվ 48 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ Հեղինե Բենյամինի Մինասյանի միջև 14.02.2005թ. /սեղանամատյան 529/ կնքվել է Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16 շենքի դիմացի ազատ տարածքում գտնվող 0.002հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր:

Այժմ Հեղինե Բենյամինի Մինասյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իր կողմից վարձակալած հողամասը իրեն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ս.Շահումյան փողոցի թիվ 48 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ Հեղինե Բենյամինի Մինասյանին ուղղակի վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքով, որը տվյալ պահին կազմում է 136 686 / հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր ութսունվեց / ՀՀ դրամ, օտարել իր կողմից 14.02.2005թ. /սեղանամատյան 529/ վարձակալած Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16/5 հասցեում գտնվող /վարձակալության պայմանագրով Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16 շենքի դիմացի ազատ տարածքում գտնվող / 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հեղինե Բենյամինի Մինասյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 204

09 հունվար 2024թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքային համայնքի և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցի 3-րդ փակուղու թիվ 6 տան բնակիչ Մայիս Բարսեղի Աթանյանի միջև 29.08.2006թ. /սեղանամատյան 2657/ կնքվել է Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16 շենքի դիմացի ազատ տարածքում գտնվող 0.002հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր:

Այժմ Մայիս Բարսեղի Աթանյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իր կողմից վարձակալած հողամասը իրեն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ծովակալ Իսակովի փողոցի 3-րդ փակուղու թիվ 6 տան բնակիչ Մայիս Բարսեղի Աթանյանին ուղղակի վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքով, որը տվյալ պահին կազմում է 136 686 / հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր ութսունվեց / ՀՀ դրամ, օտարել իր կողմից 14.02.2005թ. /սեղանամատյան 2657/ վարձակալած Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16/3 հասցեում գտնվող /վարձակալության պայմանագրով Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի փողոցի թիվ 16 շենքի դիմացի ազատ տարածքում գտնվող / 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Մայիս Բարսեղի Աթանյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 214

09 հոկտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 61 ՇԵՆՔԻ ԹԻՎ 26 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 61 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Ռոմիկ Ալբերտի Սարգսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Սվետլանա Ալբերտի Սարգսյանին և Իվետա Ալբերտի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 11.12.2023թ. տրված թիվ 11122023-04-0069 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական և «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 28.11.2023թ. կազմված հատակագիծ/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 61 շենքի թիվ 26 բնակարանին կից ինքնակամ կառուցված 26քմ մակերեսով կցակառույցի և ինքնակամ բացված թվով 1 դռան օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 61 շենքի թիվ 26 բնակարանին կից ինքնակամ կառուցված 26քմ մակերեսով կցակառույցը և ինքնակամ բացված թվով 1 դուռը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 20 381 / քսան հազար երեք հարյուր ութսունմեկ / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 224

09 հունվարի 2024թ. գ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.12.2023Թ. ԹԻՎ 2320Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 28.12.2023թ. թիվ 2320Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

հիմնական և եզրափակիչ մասերում նշված «թիվ 6 բնակարան» բառերի փոխարեն կարդալ «թիվ 15 բնակարան» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 234

03 հունվարի 2024թ. գ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12/60 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 27 շենքի թիվ 58 բնակարանի բնակիչ Մայրամ Սամվելի Կիրակոսյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք10.03.2021թ. տրված թիվ 10032021-04-0030 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավազան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 12.04.2022թ. կազմված հատակագիծ և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022JZP5VC / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 12/60 հասցեում գտնվող 0.002հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 20քմ /արտաքին 20քմ, ներքին 18.8քմ/ մակերեսով խանութը օրինականացնելու հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.12.2023թ. թիվ 01/11.1/16669 դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման , ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 12/60 հասցեում գտնվող 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 12/60 հասցեում գտնվող 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 20քմ /արտաքին 20քմ, ներքին 18.8քմ/ մակերեսով խանութը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 92 640 / իննսուներկու հազար վեց հարյուր քառասուն / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 234

03 հոկտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Մ.ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12/60 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի փողոցի թիվ 27 շենքի թիվ 58 բնակարանի բնակիչ Մայրամ Սամվելի Կիրակոսյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք10.03.2021թ. տրված թիվ 10032021-04-0030 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավազյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 12.04.2022թ. կազմված հատակագիծ և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022JZP5VC / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 12/60 հասցեում գտնվող 0.002հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 20քմ /արտաքին 20քմ, ներքին 18.8քմ/ մակերեսով խանութը օրինականացնելու հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.12.2023թ. թիվ 01/11.1/16669 դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման , ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 12/60 հասցեում գտնվող 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 12/60 հասցեում գտնվող 0.002հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 20քմ /արտաքին 20քմ, ներքին 18.8քմ/ մակերեսով խանութը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 92 640 / իննսուներկու հազար վեց հարյուր քառասուն / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 244

09 հոկտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ Գ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ /ՆԱԽԿԻՆ ԿԱՄՈ/ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 2 ԴՈՒՌԸ, 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արմինե Մկրտիչի Եղիազարյանի լիազորված անձ Արմեն Մկրտչի Անդրեասյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Արմինե Մկրտիչի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 02.11.2023թ. հաստատված թիվ 9463 և 9464 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 28.11.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023EDEZDM / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գ.Լուսավորչի /նախկին Կամո/ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 0.0277հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 12քմ / 12քմ արտաքին, ներքին 12քմ / հասարակական նշանակության շինությունը, ինքնակամ բացված թվով 2 դուռը, 2 պատուհանը օրինականացնելու, հողամասի գործառնական և արտադրամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման , ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման և ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գ.Լուսավորչի /նախկին Կամո/ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող 0.0277հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գ.Լուսավորչի /նախկին Կամո/ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող արտադրամասի նպատակային նշանակությունը փոփոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական տարածքի:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գ.Լուսավորչի /նախկին Կամո/ փողոցի թիվ 8 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 12քմ / 12քմ արտաքին, ներքին 12քմ / հասարակական նշանակության շինությունը, ինքնակամ բացված թվով 2 դուռը և 2 պատուհանը ճանաչել օրինական, որի համար սահմանված 64 848 / վաթսունչորս հազար ութ հարյուր քառասունութ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 254

02 դեկտեմբեր 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Տիգրան Մեծի փողոցի թիվ 26/1 տան բնակիչ՝ Աղասի Գևորգի Պետրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 26/1 և Տիգրան Մեծի փողոցի թիվ 26/2 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 21122023-04-0081 տրված՝ 21.12.2023թ., թիվ 13112023-04-0068 տրված՝ 13.11.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040022BX6BNC/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 26/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 264

09 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ. Մեխակյան փողոցի թիվ 37 տան բնակիչ՝ Հարություն Աշոտի Ասլանյան դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Մեխակյան փողոցի թիվ 50,52, Մ. Մեխակյան փողոցի թիվ 54 և Մ. Մեխակյան փողոցի թիվ 56 հասցեների անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 18032021-04-0093 տրված՝ 18.03.2021թ., թիվ 20122023-04-0055 տրված՝ 20.12.2023թ. և թիվ 20122023-04-0009 տրված՝ 20.12.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040025QB5NR8/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ. Մեխակյան փողոց թիվ 50-56 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 274

09 հունվարի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Խորենացու փողոցի թիվ 26 շենքի թիվ 48 բնակարանի բնակիչ՝ Սվետլանա Մկրտիչի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Խորենացու փողոցի թիվ 26 շենքին կից գտնվող անշարժ գույքին /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 23042021-04-0008 և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002R34FV7Y/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սուրբ Մ. Խորենացու փողոց թիվ 26/1խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТСКОЙ ОБЩИНЫ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 284

09 հունիսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Սուրբ Մ. Մաշտոցի փողոցի թիվ 85բ շենքի թիվ 8 բնակարանի բնակիչ՝ Կարեն Սերգեյի Ավագյանի դիմումը իրեն և Լյուդմիլա Հայրապետի Ավագյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 07092023-04-0029 տրված՝ 07.09.2023թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 29.11.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040027MVHZ5A, 04002ZANH8RU/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Մարգարա խճուղու թիվ 5/2 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 26/3 շինություն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 26/4 շինություն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 294

10 հունիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՇԵՆՔԻ ԹԻՎ 19 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վահե Սուրենի Մարգարյանի լիազորված անձ Իշխան Գալուստի Մուրադյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Վահե Սուրենի Մարգարյանի սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 28.07.2021թ. տրված թիվ 28072021-04-0071 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 4 շենքի թիվ 19 բնակարանի նպատակային նշանակությունը՝ հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը խանութի փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով , ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 4 շենքի թիվ 19 բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակականի, իսկ գործառնական նշանակությունը՝ խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30Լ

10 հոկտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09.10.2023Թ. ԹԻՎ 1812Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 09.10.2023թ. թիվ 1812Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

հիմնական և եզրափակիչ մասերում նշված « 241.3քմ / 241.3քմ արտաքին և 201.7քմ ներքին / » բառերի փոխարեն կարդալ « 222.6քմ / 222.6քմ արտաքին և 189.6քմ ներքին » բառերը, իսկ եզրափակիչ մասում նշված « 403 695 / չորս հարյուր երեք հազար վեց հարյուր իննսունհինգ / ՀՀ դրամ » բառերի փոխարեն կարդալ « 372 410 / երեք հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր տաս / ՀՀ դրամ » բառերը.

եզրափակիչ մասում լրացնել « 18.9քմ / 18.9քմ արտաքին և 12.1քմ ներքին / մակերեսով շինությունը համարել ինքնակամ» բառերը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԵԼՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 314

11 հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>>ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀԱՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 28 տան բնակիչ Արտավազդ Մարատի Սարգսյանի դիմումը իրեն և Հարություն Մարատի Սարգսյանին պատկանող /հիմք՝ Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 16.06.2021թ. տրված քաղվածք, Վաղարշապատ համայնքի ղեկավարի կողմից 16.06.2021թ. տրված տեղեկանք, Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 07.07.2021թ. հաստատված թիվ 4678 և 4679 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, ՀՀ Կադաստրի Կոմիտեի կողմից 26.12.2023թ. տրված N Կ-26122023-04-0045 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշում և <<Ավագ Ավագյան Գագիկի>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 14.11.2023թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0239-0002/, 1.02հա մակերեսով հողամասից 0.0572հա գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ այլ հողատեսքը ավելի բարձրարժեք՝ 3-րդ կարգի վարելահող հողատեսքի փոխադրելու խնդրանքով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝04-002-0239-0002/, 1.02հա հողամասից 0.0572հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք՝ 3-րդ կարգի վարելահող հողատեսքի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 324Ա

11 հունվարի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայոց Բանակի փողոցի թիվ 23 տան բնակիչ՝ Աշոտ Պարգևի Ավետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի թաղամասի թիվ 146 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝29.08.1995թ. կնքված հողամասի առուծախի պայմանագրի պատճենի վավերացրած «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 30.11.2023թ. թիվ 10039 սեղանամատյանով և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002QDKS5PS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 146 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ, АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОГО МУНИЦИПАЛИТЕТА
REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 334

11 հունվարի 2024թ. ք.Էջմիածին

ԴԱՎԻԹ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՈՉ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ՝ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՈՒՅՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ԿՐԿԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ, ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՎ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԲՌՆԱԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 105/23 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի 26 հասցեին կից Դավիթ Արիստակեսի Մարգարյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն իրավախախտումը կրկին կատարելու վերաբերյալ, պարզեց, որ

Դավիթ Արիստակեսի Մարգարյանը (հասցե՝ ք.Երևան Աջափնյակ Նորաշեն թղմ. 38 շենք, թիվ 118 բն., իրավախախտման վայրի հասցե՝ ք.Էջմիածին Սբ.Մ.Խորենացի փող., 26, անձնագիր՝ է AR0690422, տրված 16.05.2019թ.-ին 012-ի կողմից), Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի 26 հասցեին կից գտնվող տարածքում/մայթ/, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն իրավախախտումը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի <<Բնակարանային կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների կողմից 26.12.2023 թվականին կազմված թիվ 4 արձանագրության և կից նյութերի /զեկուցագիր և լուսանկարներ/ հիման վրա 2023 թվականի դեկտեմբերի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի իրավախախտման հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ իրականացնող հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում, որի անցկացման վայրի և ժամանակի մասին Դավիթ Արիստակեսի Մարգարյանը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել լսմանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. <<Վաղարշապատի համայնքապետարանի բնակարանային կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների կողմից 26.12.2023 թվականին կազմված թիվ 4 արձանագրություն և կից նյութեր /զեկուցագիր և լուսանկարներ/:

2. Հանձնաժողովի 09.01.2024թ. թիվ 105/23 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3. Վաղարշապատ համայնքի ղեկավարի՝ թիվ 99/23 վարչական գործով 13.12.2023 թվականի թիվ 2191Ա որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Դավիթ Արիստակեսի Մարգարյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի 26 հասցեին կից գտնվող տարածքում, մայթի վրա իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում, ինչի

կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 16-ին Վաղարշապատի համայնքապետարանում հարուցվել էր վարչական վարույթ, որը ավարտվել էր Վաղարշապատ համայնքի ղեկավարի վարույթում քննված թիվ 99/23 վարչական գործով 13.12.2023թ.-ին. կայացված թիվ 2191Ա որոշմամբ, ըստ որի Դավիթ Արիստակեսի Մարգարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության և վարչական իրավախախտման համար նշանակվել է տույժ:

Չնայած այն հանգամանքին, որ Դավիթ Արիստակեսի Մարգարյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի 26 հասցեին կից գտնվող տարածքում, մայթի վրա, դրա համար ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար ենթարկվել է վարչական տույժի, վերջինս շարունակել է նույն իրավախախտման կատարումը, այսինքն Դավիթ Արիստակեսի Մարգարյանը ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն իրավախախտումը, որի վերաբերյալ Վաղարշապատի համայնքապետարանի <<Բնակչության կոմունալ վարչություն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների կողմից 26.12.2023 թվականին կազմվել է թիվ 4 արձանագրությունը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հունվարի 9-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Դավիթ Արիստակեսի Մարգարյանը:

2023 թվականի դեկտեմբերի 27-ին հրավիրված վարչական լսման վերաբերյալ ծանուցումը ուղարկվել է Դավիթ Արիստակեսի Մարգարյանին և միաժամանակ հրապարակվել է ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

Դավիթ Արիստակեսի Մարգարյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել է 2024 թվականի հունվարի 9-ի վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետի՝համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կամ առանց համապատասխան թույլտվության իրականացված բացօթյա առևտրի դեպքում կիրառվում է առևտրի իրականացման և ծառայությունների մատուցման առարկաների առգրավում: Համայնքի ղեկավարի որոշմամբ սույն մասով սահմանված առգրավելու իրավասությունը կարող է վերապահվել աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձին:

<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, ավտոտրանսպորտային միջոցների շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում): Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել վաճառք սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի, 14-րդ մասի «ա» և «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաև համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և

իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումն այն է, որ այդ առարկան, հարկադիր կարգով անհատույց դարձվում է պետական կամ համայնքային սեփականություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 3-րդ մասի 11-րդ /պարբերության/կետի համաձայն՝ եթե վարչական իրավախախտման համար սույն օրենսգրքով նախատեսված է վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, ապա այն ենթակա է առգրավման: Առգրավում կատարելու մասին կազմվում է արձանագրություն, որի մեկ օրինակը տրվում է վարչական իրավախախտում կատարած անձին: Արձանագրությունը ստորագրվում է այն կազմող անձի և վարչական իրավախախտում կատարած անձի կողմից:

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան առգրավելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, իսկ սույն օրենսգրքի 123.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 140-րդ հոդվածի 5-րդ մասով, 162-րդ հոդվածով, 169.16-րդ հոդվածի 3-րդ և 18-րդ մասերով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում օրենքով սահմանված ժամկետում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ վարչական կամ դատական կարգով բողոք չներկայացնելու, իսկ բողոքարկման դեպքում բողոքի մերժումից հետո՝ երեսնօրյա ժամկետում, համապատասխան մարմինը դիմում է դատարան առգրավված առարկան բռնագրավելու պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան դատարան դիմելու պահին այլևս գոյություն չունի:

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան ենթակա է առգրավման հետևյալ մարմինների կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ դրա համար լիազորված անձինք՝ սույն օրենսգրքի 162-րդ և 169.16-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 311-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավման մասին որոշման կատարումը իրականացվում է բռնագրավված առարկան վերցնելու և այն հարկադրաբար անհատույց պետության կամ համայնքի սեփականություն դարձնելու ճանապարհով:

Բռնագրավելու մասին որոշումներն ի կատար են ածվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տվյալ դեպքում՝ Դավիթ Արիստակեսի Մարգարյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի 26 հասցեին կից մայթի վրա, դրա համար ոչ սահմանված տեղում առևտուր իրականացրելու համար ենթարկվել էր վարչական տույժի, վերջինս՝ չնայած բազմաթիվ նախազգուշացումների, շարունակել է նույն իրավախախտման կատարումը, չվերացնելով իրավախախտման հետևանքները, այսինքն Դավիթ Արիստակեսի Մարգարյանը ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն իրավախախտումը, որը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 24-րդ, 28-րդ, 32-րդ և 162-րդ հոդվածի 2-րդ մասով, 310-րդ, 311-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դավիթ Արիստակեսի Մարգարյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն իրավախախտումը, կրկին կատարելու համար 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

2. Վաղարշապատի համայնքապետարանի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի պետին լիազորել կատարելու գույքի բռնագրավումն:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, օրենքով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34/ա

11 հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՀԱՆ ԽԱՉԻԿԻ ԿԱՐՃԻԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վահան Խաչիկի Կարճիկյանի լիազորված անձ՝ Սեդրակ Աշոտի Հարությունյանի դիմումը պարզվեց, որ սեփականության իրավունքով Վահան Խաչիկի Կարճիկյանին պատկանող /հիմք՝ 27.01.1984թ. տրված տեխնիկական անձնագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 05.12.2023թ. հաստատված թիվ 10162 սեղանամատյանով գրանցված փաստաթղթի պատկանելության վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին որոշում և «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 10.10.2023թ. կազմված հատակագիծ, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Նալբանդյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող 0.0546 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ. Նալբանդյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող 0.0546 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Վահան Խաչիկի Կարճիկյանի /ծնված 20.03.1947թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 354

11 հոկտեմբեր 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վահան Խաչիկի Կարճիկյանի լիազորված անձ՝ Սեդրակ Աշոտի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Նալբանդյան փողոցի թիվ 43 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝27.01.1984թ. տրված տեխնիկական անձնագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 05.12.2023թ. հաստատված թիվ 10162 սեղանամատյանով գրանցված փաստաթղթի պատկանելության վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին որոշում և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002HAG56DR/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Մ. Նալբանդյան փողոց թիվ 43/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 364

11 հունվարի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 40վ տան բնակիչ՝ Աստղիկ Դերենիկի Մելքոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 40/4 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18122023-04-0106 տրված՝ 18.12.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002CGCP47P/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Արարատյան փողոց թիվ 40/5 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ ВАГАРШАПАТСКОЕ МУНИЦИПАЛЬНОЕ УПРАВЛЕНИЕ
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ VAGHARSHAPAT MUNICIPAL MANAGEMENT
04440307

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 374

«12» հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔ, ԵՐԵՎԱՆ-ԱՐՄԱՎԻՐ ՄԱՅՐՈՒՂԻ 20-22ԿՄ, 70 ՀՈՂԱՄԱՍ ԳՏՆՎՈՂ 0,0183 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԻ ԱՇԿԱՐՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2024թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 6 և 7 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ, 70 հողամաս գտնվող 0,0183 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի աճուրդին մասնակցել է Վարդան Պետրոսի Աշկարյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 4 470 672 /չորս միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 12.01.2024թ. թիվ 6 և 7 արձանագրությունները:

2. ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ, 70 հողամաս գտնվող 0,0183 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Վարդան Պետրոսի Աշկարյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 384

«12» հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 3 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՌՈԲԵՐՏ ՍԵՐԳԵՅԻ ԳԱՋԱՐՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2024թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 և 2 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Ոսկեհատ գյուղում գտնվող 3 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող (4-րդ կարգի) հողամասի աճուրդին մասնակցել է Ռոբերտ Սերգեյի Գաջարյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 6 052 500 /վեց միլիոն հիսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 12.01.2024թ. թիվ 1 և 2 արձանագրությունները:

2. ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Ոսկեհատ գյուղում գտնվող 3 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող (4-րդ կարգի) հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Ռոբերտ Սերգեյի Գաջարյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 39Կ

«12» հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔ, ԵՐԵՎԱՆ-ԱՐՄԱՎԻՐ ՄԱՅՐՈՒՂԻ 20-22ԿՄ, 46 ՀՈՂԱՄԱՍ ԳՏՆՎՈՂ 0,0405 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԿԱՐԵՆ ԱՍԱՏՈՒՐԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.01.2024թ. Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 4 և 5 արձանագրությունների համաձայն՝ աճուրդային եղանակով օտարվող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ, 46 հողամաս գտնվող 0,0405 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի աճուրդին մասնակցել է Կարեն Ասատուրի Եղիազարյանը և առաջարկել է առավելագույն գին՝ 9 894 110 /ինը միլիոն ութ հարյուր իննսունչորս հազար հարյուր տաս/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 12.01.2024թ. թիվ 4 և 5 արձանագրությունները:

2. ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ, 46 հողամաս գտնվող 0,0405 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի աճուրդում հաղթող ճանաչել Կարեն Ասատուրի Եղիազարյանին և վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 404

12 հունվարի 2024թ. գ. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏՈՒՇ ՍԵՊՈՒՀԻ ԽՈՒՄԱՐՅԱՆԻ, ԷՎԵԼԻՆԱ ՌԱԶՄԻԿԻ ԽՈՒՄԱՐՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ԱՐՏՈՒՇԻ ԽՈՒՄԱՐՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԵԿ ԱՐՏՈՒՇԻ ԽՈՒՄԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Արտուշ Սեպուհի Խումարյանի, Նարինե Արտուշի Խումարյանի, Էվելինա Ռազմիկի Խումարյանի և Նարեկ Արտուշի Խումարյանի լիազորված անձ՝ Արմինե Սեպույի Խումարյանի դիմումը պարզվեց, որ սեփականության իրավունքով Արտուշ Սեպուհի Խումարյանին, Նարինե Արտուշի Խումարյանին, Էվելինա Ռազմիկի Խումարյանին և Նարեկ Արտուշի Խումարյանին պատկանող /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 24.05.1989թ. թիվ 16 արձանագրության քաղվածք, ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղգործկոմի 28.06.1996թ. թիվ 145 արձանագրության քաղվածք, <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղի կողմից 08.02.2023թ. տրված՝ թիվ Ամ-85 արխիվային քաղվածք և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 25.11.2023թ. կազմված հատակագիծ, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Զորավար Անդրանիկի թաղամասում գտնվող 0.048հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի թաղամասում գտնվող 0.048 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Արտուշ Սեպուհի Խումարյան /ծնված 19.12.1956թ./, Էվելինա Ռազմիկի Խումարյանի /ծնված՝ 22.07.1961թ., Նարինե Արտուշի Խումարյանի /ծնված՝ 03.10.1989թ./ և Նարեկ Արտուշի Խումարյանի /ծնված՝ 21.08.1991թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 414

12 հունվարի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Արտուշ Սեպուհի Խումարյանի լիազորված անձ՝ Արմինե Սեպույի Խումարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 24.05.1989թ. թիվ 16 արձանագրության քաղվածք, ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղգործկոմի 28.06.1996թ. թիվ 145 արձանագրության քաղվածք, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղի կողմից 08.02.2023թ. տրված՝ թիվ Ամ-85 արխիվային քաղվածք և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002RGB2MGU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 51 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 924

12 հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆ-ԱՐՄԱՎԻՐ ՄԱՅՐՈՒՂԻ 20-21ԿՄ, ԹԻՎ 88/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 21.11.2023թ. թիվ 2055Ա որոշման, առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Սարգիս Անդրանիկի Հունանյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի 20-21կմ, թիվ 88/1 հասցեում գտնվող՝ 240.8քմ / 240.8քմ արտաքին և 223.3քմ ներքին / մակերեսով ավտոտեխսպասարկման կետը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0407հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Սարգիս Անդրանիկի Հունանյանը տվել է իր գրավոր համաձայնությունը գնելու այն՝ ըստ ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 240.8քմ / 240.8քմ արտաքին և 223.3քմ ներքին / մակերեսով ավտոտեխսպասարկման կետը 4 267 217 / չորս միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր տասնյոթ / ՀՀ դրամ և 0.0407հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 1 807 813 / մեկ միլիոն ութ հարյուր յոթ հազար ութ հարյուր տասներեք / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սարգիս Անդրանիկի Հունանյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի 20-21կմ, թիվ 88/1 հասցեում գտնվող՝ 240.8քմ / 240.8քմ արտաքին և 223.3քմ ներքին / մակերեսով ավտոտեխսպասարկման կետը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0407հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Սարգիս Անդրանիկի Հունանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 434

12 հոկտեմբերի 2024թ. Է.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՎԱՐԹՆՈՑ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 27.11.2023թ. թիվ 2073Ա որոշման, առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Սամվել Հովսեփի Հովսեփյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 2/3 հասցեում գտնվող՝ ընդհանուր 37.5քմ / 37.5քմ արտաքին և 30.7քմ ներքին / մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00267հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Սամվել Հովսեփի Հովսեփյանը տվել է իր գրավոր համաձայնությունը գնելու այն՝ ըստ ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ ընդհանուր 37.5քմ / 37.5քմ արտաքին և 30.7քմ ներքին / մակերեսով ավտոտնակը 73 838 / յոթանասուներեք հազար ութ հարյուր երեսունութ / ՀՀ դրամ և 0.00267հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 118 597 / հարյուր տասնութ հազար հինգ հարյուր իննսունյոթ / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սամվել Հովսեփի Հովսեփյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 2/3 հասցեում գտնվող՝ 37.5քմ / 37.5քմ արտաքին և 30.7քմ ներքին / մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.00267հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Սամվել Հովսեփի Հովսեփյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44Ա

15 հունվարի 2024թ. Ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-1010-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 28.10.2008թ. հաստատված թիվ 6996 սեղանամատյանով գրանցված հողամասերի փոխանակության մասին պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040023Y6RKWJ/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս 2-րդ փողոց թիվ 43 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 454Ա

15 հունվարի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-1009-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 28.10.2008թ. հաստատված թիվ 6996 սեղանամատյանով գրանցված հողամասերի փոխանակության մասին պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002GZTY24J/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս 2-րդ փողոց թիվ 53 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 464

15 հոկտեմբերի 2024թ. ք. Էջմիածին

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 33 տան բնակիչ Անդրանիկ Դավթի Մելքոնյանը՝ 0.0018հա մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով իրեն օգտագործման տրամադրելու խնդրանքով՝ տաղավար տեղադրելու համար:

Տվյալ հողամասը ընդգրկվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 08.05.2001թ. թիվ 286 որոշման և ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 22.08.2022թ. արտահերթ չորրորդ նիստի թիվ 128 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ թիվ 33 տան բնակիչ Անդրանիկ Դավթի Մելքոնյանին կառուցապատման իրավունքով, տաղավար տեղադրելու համար, օգտագործման տրամադրել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 33/2 հասցեում գտնվող՝ 0.0018հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման ժամկետը սահմանել 10 /տաս/ տարի, իսկ վարձավճարը տարեկան 90000 /իննսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Անդրանիկ Դավթի Մելքոնյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավուքի տրամադրման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Ոչ հիմնական շինության /տաղավարի/ տեղադրման աշխատանքները իրականացնել օրենքով սահմանված կարգով թույլտվություն ստանալուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 474

15 հունվարի 2024թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 11.12.2023թ. թիվ 102-Ա որոշումը, ՀՀ վարչապետի 22.12.2009թ. թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 30.11.2023թ. տրված թիվ 2/փ-417 եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 5/1 հասցեում գտնվող 0.0027հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 484

15 հունվարի 2024թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 04.04.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002KJYYJWT.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող արտադրական նշանակության շինությանը և դրա համար զբաղեցրած 0.0027հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս թիվ 5/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 422

15 հունվարի 2024թ. գ. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կաղաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023FBHDYH և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 04.04.2023թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0027հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 27քմ /27քմ արտաքին և 21.2քմ ներքին/ մակերեսով արտադրական նշանակության շինությունը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0027հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 27քմ /27քմ արտաքին և 21.2քմ ներքին/ մակերեսով արտադրական նշանակության շինությունը:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող 27քմ /27քմ արտաքին և 21.2քմ ներքին/ մակերեսով արտադրական նշանակության շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0027հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Ազատ Մգուշի Բաղտիկյանին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ